

ԽԱՉԱՅՈՒՐ ԵՐԵՑ ԿԱՓԱՍԵՅՈՒ ՏՈՐԵԴՐՈՒԹՅՈՒՆԸ

ՀՍՍՌ Մատենադարանի գրչազրաց թեմատիկ բերլիոգրաֆիայում վերջին տարիներս գրանցվել են մեր ձեռագիր ժողովածուներում հայտնաբերված մի շարք չհրատարակված և արժեքավոր տարեգրություններ։ Այդ տարեգրությունների աննոտացիաները, հետաքրքրող մասնագետներին դուրսընթանալու նպատակով, մենք հրատարակել ենք Մատենադարանի «Գիտական նյութեր»-ի ժողովածուի առաջին հատորում¹⁾։ Մատենադարանի գիրեկցիայի հանձնարարությունով մենք կադմել ենք նաև չհրատարակված կարևոր տարեգրությունների մի ժողովածու²⁾, որը շուտով հրատարակության կհանձնվի։ Տարեգրությունների այս ժողովածուի մեջ մտնում են՝ Կիրակոս Ռշտունցու, Հակոբ Դարբնեցու, Դավիթ Բաղեչեցու, Ստեփանոս Դաւոնցու, Երեմիա Քյոմերճյանի և այլոց տարեգրությունները։

ՀՍՍՌ Մատենադարանում, մոտ ժամանակներս, մեզ հաջողվեց նաև հայտնաբերել Խաչատուր Երեց Կաֆայեցու տարեգրությունը, որի հետ անհրաժեշտ ենք համարում ծանոթացնել մեր ընթերցողներին։ Բայց նախքան Կաֆայեցու անձնավորության և տարեգրության վրա կանգ առնելը, համառոտակի մի լատին խոսք ասենք այն մասին, թե ինչ էր ներկայացնում իրենից միջին դարերում Կաֆան, ներկայիս Թեոդոսիան, որպես հայ գրչություն կենտրոն։

Կաֆան հայ գրչության կարևոր օջախներից մեկն է հանդիսացել։ Հայ գրչու-

թյունը Կաֆայում իր ծաղկման չրջանն է ապրել հատկապես 14-րդ դարում։ ՀՍՍՌ Մատենադարանում կան բազմաթիվ ունիկոն գրչագրեր, որոնք գրված են այդ ժամանակաշրջանում։ Այդ գրչագրերից հատկապես արժեքավոր են՝ Կարապետ Երեցի (№ 7741), Մարգար Ղրչի (№ 7447), տերացու Ստեփանոսի (№ 7471), Հովհաննես Ղրչի (№ 7430) և Մարկոս Ղրչի (№ 7438) գրչագրերը, որոնք Մատենադարան են եկել Նոր Նախիջևանի ձեռագրաց ժողովածուի հետ։

Մեզ հասած պատմական որոշ տեղեկություններից երևում է, որ Ղուխում մենք ունեցել ենք հայկական մի խոշոր հատված։ Բավական է ասել, որ միայն Կաֆայում հայ լուսավորչականներն ունեցել են քառասուն և հինգ եկեղեցի, որից 29-ը պարսպի մեջ, իսկ 26-ը պարսպից դուրս։ 18-րդ դարում այդ եկեղեցիներից 24-ը դեռևս կանդուն են եղել և հայ տղերդուներից մեկն անհրաժեշտ է համարել իր տղերից մեկում երգել դրանք չարքով։ «Բեֆե, կառն, մեծ քաղաք է, Թագաւորաց հաստատած է, Քառն չորս եկեղեցի է, Քառերն ամեն սրբատաշ է, Քեֆե քաղաք ծովահայեաց, եկեղեցիքն զարդարած...»³⁾

Ղուխի հայ զաղուլթն այնքան մեծ է եղել և նրա դործունեությունն այնքան աչքի ընկնող, որ ճանապարհներն իրենց իրավունք են համարել այդ «Ծովադիտակ և հոյակապ մայրաքաղաքը», իր հարևան

1) Տես մեր նոգվածը «Համառոտ բերլիոգրաֆիա ՀՍՍՌ Մատենադարանի գրչագիր մանր ժամանակագրությունների», ՀՍՍՌ Մատենադարանի գիտ. նյութ. ժողովածու, էջ 207—223։

2) Այդ տարեգրությունների տեքստը կադմելիս մեզ օգնել է ուսանողուհի Մ. Մաղումյանը։

3) Հ. Բ. Վ. Քուչներյան, Պատմություն զաղթականության Պրիմու հայոց, Վենետիկ, 1806, էջ 141։

շրջանների հետ անվանել «Armenia maritima» («Ծովային Հայաստան»¹⁾։

Մարտիրոս դրեչն իր Կաֆայում գրած մի ձեռագիրը հիշատակարանում հետևյալ ձևով է գովերգում Կաֆա քաղաքը․

«Քաֆա քաղաքը նման դրախտի,
ի նրասաղէմ սուրբ քաղաքի,
Մեծ Հռոմայ, և Լստանպոլի,
Շամա, Մաբա, և Եգիպտոսի,
Վանքեր քաղում եւ ջաղջնի,
Եկեղեցիք շուրջամակի,
Նըման վերնայն սուրբ Սիմնի,
Եւ տաճարքն Սողոմոնի...»²⁾։

Ներկա տարեգրության հեղինակ իսկապատուր երեց Կաֆայեցին եկա մեծ գովեստով է խոսում Կաֆայի մասին։ «Կաֆա քաղաք— գրում է նա— հիւսիսական կողմն Հոնաց երկրի, որ բղխէ զկաթն եւ զմեղրն»³⁾։

Կաֆայի հայ դպրոցն առանձնաբեւ աչքի է ընկնում իր տաղերգունքով։ Միայն 16—18-րդ դ. դ. «Կաֆայեցի» մականվամբ մենք ունեցել ենք յոթը տաղերգու։ Գրիգոր Կաֆայեցի, որը հայտնի է Աստվածատուրի վրա գրած տաղով, իսկապատուր Կաֆայեցի, կամ որ երբեմն հիշվում է իսապեկ, որը հայտնի է «Աքի որ պաղչան մոմունք», «Գիւլիս համուրց ազգին կամանց», «Եկ սիրելիս ուրախացուք», «Տաճար լուսեղէն» և այլ տաղերով, ինչի Կաֆայեցի, որը հայտնի է «Գեղեցիկ պատկեր», «Յանկարծակի մէկ մի տեսայ» և այլ տաղերով, Հովհաննես Կաֆայեցի, որը հայտնի է «Ի սուգ կոծոյ» և «Յայս ցնծեալ բերկրիս» տաղերով, Ստեփանոս Կաֆայեցի, որը հայտնի է «Սիրով սիրոյդ սէր բորբոքեալ քաղաքի» տաղով, Վարդան Կաֆայեցի, որը հայտնի է «Հիւսիսական կողմն աշխարհի», «Ճառագայթ փառաց» և այլ տաղերով— և Վրթանես Կաֆայեցի,

որը հայտնի է, «Իմեալ դասուց...» տաղով։ Ձեռք խոսում դեռ Կաֆայեցի բաղաժիրի ալլ դրեչն իր մասին, որոնք իրենց հիշատակարանները գրել են չափածո։

Կաֆայի հայկական դպրոցին պատկանող գրչագրերն աչքի են ընկնում իրենց խնամքով և գեղեցիկ գրվելու արվեստով։ Գրիչներն անհամեմատ գրագետ անձինք են և քիչ են սխալները։ Ուշադրության արժանի է, որ Ղուիմում գրված ձեռագրերի մեջ շատ են պատմագիտական բովանդակութիւն ունեցող ժողովածուները և տաղարանները։ Պարզվում է, որ Ղուիմում գրչուցության արվեստով զբաղվող յուրաքանչյուր անձնավորութիւն պարտավոր էր լինել յուրացնել Գրիգոր Սկեվասցու և Արիստակեսի գրչության արվեստին վերաբերող աշխատութիւնները։ Այսպես, Ղընիմի Սուրխաթ քաղաքում 1357 թ. ընդօրինակված Ստեփանոս դրչի հիշատակարանում կարդում ենք. «...Սա է (Սյսիմֆն Գեվարգ Սկեվասցու և Արիստակեսի գրչության արվեստի աշխատութիւնները։— Ա. Ա.) քանոն եւ գաղափար ամենայն արհեստից, եւս առաւել որք փութան ձեռնարկել յարհեստ գրչութեան։ Զի որպէս անհնար է թուչոց ի լուծ լծել եւս ակաւս պատառել, եւ կամ եղանց յաւալ վերանալ, նոյնպէս առանց աշխատելոյ ի սմա ոչ ոք կարէ հասու լինել արուեստին մեծի գրչութեան. եւ որ յանդիման համարձակել, ոչ կարէ գրել ճշմարիտն, այլ ձգծանէ զարուեստն եւս աղաւաղէ զգրելին... զի որպէս մարգարիտ ի քիթս խողի, եւ մանեակ ոսկի ի պարանոց իւրոյ, այնպէս եւս սա (այսիմֆն գրչության արվեստը) ի ձեռն անիմաստ եւ անմիտ առնն...»⁴⁾։

Ղուիմի կուլտուրական դպրոցներից մեկում դաստիարակութիւն ստացած սաներից մեկն է մեր ներկա Տարեգրութիւն հեղինակ իսկապատուր երեց Կաֆայեցին։

1) Հ. Բ. Վ. Քուչներյան, Պատմութիւն դպրեականութեան երիմու հայոց, էջ 73։

2) ՀՄՍԻ Մասն. գրչագիր № 2672 (հիշատակարանից)։

3) իսկապատուր երեց Կաֆայեցու Տարեգրութիւնը, էջ 3 (Կաֆայեցու Տարեգրութիւններից բերված մեկնարկների էջերը մեր պատրաստած տեքստի էջերն են)։

4) ՀՄՍԻ Մասնադարան, № 2371, թերթ 237 բ։



Պաշատուր երեց Կաֆայեցին ծնվել է 1592 թվին։ Այդ երևում է իր ձեռագրում թողած հետևյալ հիշատակարանից.

«ՀԴ (64) հասեալ առ ամին զերեզմանի...»

Հետևեցայ մինչ ի ՌՀԵ (1105) թվականին¹⁾

Եթե հայոց 1105 թվականին, այսինքն ներկա 1656 թվականին, Պաշատուր երեցը եղել է 64 տարեկան, ասքա նա ծնված լիցաթի լինի 1592 թվականին։

Թե ում մոտ է աշակերտել Պաշատուր երեց Կաֆայեցին, այդ մասին պարզ տեղեկություն մեզ հայտնի չէ։ Հավանական է, որ նա դաստիարակություն ստացած լինի իր փեսա Պաշատուրի և ոմն Ավետիքի մոտ, որին նա հիշում է իրեն քահանա ձեռնադրելու կապակցությամբ. «... Աստուած լուսաւորէ՛ հոգին Աւետիքին, և աշխատաւորին իմոյ տէր Պաշատուր քահանային, որ շատ դատեցաւ վասն իմ, որ է ինձ փեսայ և հայր...»²⁾

Տարեգրության մեջ եղած մի հիշատակությունից երևում է, որ Պաշատուր երեցը ամուսնացել է 1617 թվին 25 տարեկան հասակում. «Թվին ՌԿԶ...», ամսեանն աւգոստոսի, աւուր ԻԴ (24) կիրակի ուրբ Աննայի, մեղաւորս աշխարհ մտի և Խարսանիս արարի»³⁾

Նույն տարեգրության մեջ եղած մի այլ տեղեկությունից երևում է, որ Պաշատուր երեցն ունեցել է երեք զաւակ՝ Պուլիլուպէր (տղան), Ժորժիկը (մեծ աղջիկը) և Աննան (փոքր աղջիկը)։ Վերջինս երեկա հասակում մահացել է. «Ծնաւ որդին իմ Պուլիլուպէյ թվին ՌԿԼ (1618), յունիս Զ. (6), աւրն շաբաթ»,—

դրում է Կաֆայեցին։—«Ծնաւ դուստրն իմ Ժորժիկը թվին ՌԿԹ (1620), դեկտեմբերի Ժ (7), աւրն հինգշաբթի. ՌՀԲ (1623) թվականին Աննայաթունս ծնամսիկ, դեկտեմբերի Թ (9) փոխացաւ առ Աստուած»⁴⁾։ Էդրոմիկը հետագայում, երբ հասակ է առնում, ամուսնանում է ոմն Արխատակեսի հետ։ «Աստուածային հրամանաւ,— դրում է Կաֆայեցին,—Ըստաքէսն տուն առի, Ժորժիկըս տուր, հարսանիս արաք, պսակեցաք հոկտեմբերի աւաջի աւրն Վարադէ խաչին երկուշաբթին»⁵⁾

Նախկին Նոր Նախիջևանի ժողովածուում դանդղ մի ձեռագիր հիշատակաբանից երևում է, որ Պաշատուր երեցն ունեցել է մի այլ աղջիկ ևս Պուլիլուպէյան անունով։ Այս ձեռագրի պատվիրատուն Պաշատուր երեց Կաֆայեցու որդին, Պուլիլուպէին է։ Նա դրում է. «Յիշեալիք ի Գրիսոս Յիսուս ի տէր մեր դատացաւ սորա զպարոն Պուլիլուպէին և զհայրն իւր զՊաշատուրն և զմայրն իւր Աննա խաթունն և զբոյրն իւր Պուլիլուպէյան և քուրորդին զպարոն Աստուածատուրն...»⁶⁾

Իր երիտասարդ հասակում Պաշատուրը կիսասարկավազ է կարդում Կաֆայի ուրբ Թորոս եկեղեցում, իսկ 1624 թվին, նույն եկեղեցում, ձեռնադրվում է ծխատեք քահանա։ Այդ մասին նա իր տարեգրության մեջ դրում է. «Թվին ՌՀԳ (1624) ամի, ամսեանն մարտի ԺԵ (15), աղուհացից վեցում կիրակին Լուսաւորչի, և զիս, անաթանս, հոգ և մօխիթս, յուլ և ծուլս, կիսասարկաւազ Պաշտոպ մեղաւորս, ձեռնադրեցին զիս քահանայ, որ չէի արժանի կարգի և աստիճանի...»⁷⁾

Այսպիսով, պարզվում է, որ Պաշա-

1) Պաշատուր երեց Կաֆայեցու Տարեգրությանը, էջ 38:

2) Նույնը, էջ 8:

3) Նույնը, էջ 1—2:

4) Նույնը, էջ 1—2:

5) Նույնը, էջ 26:

6) Գարեգին արքեպիսկոպոսի ձեռագրաց հիշատակարանների ժողովածու, V հատոր:

7) Պաշատուր երեց Կաֆայեցու Տարեգրությանը, էջ 8:

տուր երեցի աշխարհիկ անունը լեղել է խաչգոռու: Ձեռնադրությունից հետո նա ստացել է խաչատուր երեց անունը: «Յիշեալ զբազմամեղս խաչատուր երէց» — գրում է նա իր ծածկադիր հիշատակարանում:¹

1645 թվին, հինգ ամիս ժամանակով, խաչատուր երեց Կաֆայեցին քահանայադործության է դնում Բաղչիսարայ, իսկ 1619 թվին՝ ճանապարհորդում դեպի Կ. Պոլիս. «ՌՂԴ թվականին Պաղչիսարայն գնացի, հինգ ամիս քահանայադործութիւն արի, տարեդիրն հաւ էր, (ուզում է ասել լսեմ էր — Ա. Ա.), զատիկն ասլուրիլի կեց էր... ՌՂԸ-ին (1642) Ըստամպաւ դընացի՝ աւգոստոսին. նոյեմբերին եկի. դատիկն ասլուրիլի ին (25) էր»:²

Կաֆայեցու տարեդրությունը վերջանում է 1658 թվականի դեպքերի հիշատակությամբ.

«Թվականիս հազար ամի,
Հարիւր եւ եօթ էր անիի,
Եւ ամիսն էր ասլուրիլի,
Որ լսեցաք ողորմելի և կոծելի,
Մահն պարոն Գրիգորի...»:³

Չնայած տարեդրության վերջին թերթեր են ընկել, սակայն պրակները դասավորությունից և վերջին քայքայված թերթերի վրա կարդացվող տեղատից անկում է, որ վերը բերված ոտանավոր հատվածը Կաֆայեցու վերջին հիշատակարանից է: Կաֆայեցու մի փոքրիկ ոտանավոր հիշատակարանից երևում է նաև, որ նա իր ծերության հասակում դառնում է նյութական որոշ կարիքի մեջ:

«Փռղ չունիմ ֆար հատուցման,
Խիստ անհարակ, անօգնական,

Ատոն չունիմ տեղ մնացական,
Եւ ոչ անդիմն հանգստեան»:⁴)

Տարեդրության բովանդակությունից երևում է, որ խաչատուր երեցն իր Տարեդրությունը գրել է ոչ թե մի տարում, այլ մի շարք տարիներ ընթացքում: Այսպես, 1631 թվականի պատմական դեպքերի մասին խոսելիս, Կաֆայեցին գրում է. «Թվականն ՌՁ (1631)... այսօր շաբաթ օր է, ասլուրիլ և (30) է. այս խաչատուր վարդապետը եկաւ ան սահաթին մտաւ նստել գնաց. Աստուած բարի ճանապարհ տայ»:⁵)

Տարեդրության հետևյալ շարադրությունից երևում է, որ խաչատուր երեցը 1631 թվականից հետո Տարեդրությունը շարունակում է ևս 27 տարով:

Կաֆայեցու Տարեդրությունը պարունակող ձեռագիրն իր բովանդակությամբ տաղարան է: Նա ՀՍՍԻ Մատենադարան է եկել Երևանի Գրական Թանգարանից, ուր գրանցված է եղել № 395-ի տակ: Նա Թանգարան է եկել նոր Նախիջևանի ձեռագրաց հավաքածուի հետ միասին: Ձեռագիրն այժմ ՀՍՍԻ Մատենադարանի սեփականությունն է և գրանցված է 7709 թվահամարի տակ:

Կաֆայեցու ձեռագիրն ունի 245 թերթ: Պրակները խառնված են: Ձեռագրի մեծությունն է՝ 15×11×4.5 սանտ.: Կաղմը առաջ կարտոնից է եղել, իսկ վերջնորս Մատենադարանի կաղմատանը կաշեպատվեղեցիկ կաղմված է: Կաղմի ներքին կողմերը պատած է կտավով: Պահպանակներ չունի: Ձեռագրի վիճակն անբավարար է:

1) խաչատուր երեց Կաֆայեցու Տարեդրությունը, էջ 26—27.

2) Նույնը, էջ 326.

3) Նույնը էջ 37.

4) Մենք այս մանր տեղեկությունները բերում ենք այն պատճառով, որ ընթերցողը չմոռցի մեր տարեդրության ներդրակին խաչատուր երեց, որը դարձյալ ունի խաչատուր քահանայանունը, ասլուրիլ է Կաֆայեցու և ժամանակակից է մեր ներդրակին:

5) խաչատուր Կաֆայեցու տարեդրությունը, էջ 38.

6) Նույնը, էջ 30.

Սկզբից և վերջից թերի է: Կան նաև մի-
ջեց ընկած կամ կտրատված թերթեր:
Տեղատեղ ձեռագրի տեքստը եղծված է մե-
անհար է ընթերցել: Որոշ տեղերում կան
փակցրած թերթեր: Ձեռագրի նյութը
թուղթ է: Գրված է միասյուն նոսր գրով:
Կան նաև դատարկ, չգրված էջեր (թ. թ.
121բ, 169բ, 238բ): Վերնադրերը գրե-
ված են կարմիր թանաքով: Տեքստերի ըս-
կզբներում պատահում են թռչնադեր, հանգուցադեր և կիսախորանների՝ դռնա-
թափ և հասարակ դժգրություններ: Ձե-
ռագրի զրիչն ինքը, հեղինակն է: Նա ձե-
ռագրերը գրել է սկսել 1620 թվից: Հիշա-
տակարան ունի թ. թ. 67ա և 114բ-ում:

Տաղարանում տաղեր ունեն Գրեղոր
Աղթամարցին, Առաքել Վարդապետը, Նա-
ղալը, Դուլ օղլին և ուրիշները:

ՀՄՍՈՒ Մատենադարանի № 7709 առ-
դարանից մինչև այժմ օգտվել է աղագե-
միկոս Մ. Արեղյանն իր արժեքավոր «Գու-
սանախան ժողովրդական տաղեր, հայրեն-
ներ և անտուններ» խորագրի կրող աշխա-
տության մեջ: Նա տաղարանից վերցրել է
երեք տաղ՝ «Գիշերս ես ի խում էի...»,
«Ոնց որ գիրկն ու ծոց էտք...», «Այ իմ
տղայ, իմ տղվար»: Տաղերը հիշված են
պայմանական «ԹԳ» նշագրերի տակ:
Ձեռագրի մասին աղագ. Մ. Արեղյանը
գրել է. «ԹԳ.—Երևանի պետ. թանգարա-
նի ձեռագիր № 395: Օղովել, հմ ան-
ձամբ»:¹⁾

Աղագ. Մ. Արեղյանը ոչինչ չի գրել,
ո՛չ տաղարանի գրչության ժամանակի, ո՛չ
գրչի և ո՛չ էլ տաղարանի պարունակած
Տարեգրության մասին:

Կաֆայեցու Տարեգրության վերաբե-
րության մասին, որքան մեղ հայտնի է, չեն
խոսել նաև այլ անձնավորություններ: Նա
միևնույն ժամ դառնում է անհայտ, չու-
սումնասիրված և հիշատակված միայն
կում:



Կաֆայեցու Տարեգրության մեջ ար-
ժեքավոր տեղեկություններ կան էջմիած-
նի Կաֆա ուղարկվող նախնականների և հայ
եկեղեցական առանձին հարցերի մասին:
Այսպես օրինակ, 1656 թվին էջմիածնից ե-
կած նախնական Կաֆայեցին հետևյալ
տեղեկությունն է տալիս. «Նուրբակ եկա-
Գարրիէլ Վարդապետն էջմիածնայ լուսա-
բուղի մեռնաւն սուրբ Սարգիս Հովի
Հրեշտակապետն, ետոյ զնայ Դարասու,
Պաղչայարայ, ի Կիլիզով, Դրիմ և գեղա-
րիքն... զամենեւնն նուրբակեց, սուրբ
դատիկն իմ ժամ արաւ ի սուրբ Թորոս՝
տէր Սարգիս արեղայն մ երկու սարկա-
ւաք ընդ նմա»:²⁾

Ուղարկության արժանի է, որ Դրիմի
հայ լուսավորչական հափայեցները, քա-
ղաքական ամենածանր պարագաներում ան-
գամ, ամենատեսիլ կերպով կառված են ե-
ղել Մայր աթոռի, Հայոց Հայրապետու-
թյան հետ: Էջմիածնից եկած ամեն մի
պատվիրակ մեծ ուրախությամբ ընդունվել
և հարգվել է նրանց մոտ: Էջմիածնի նը-
կատմամբ ցուցաբերվող կենսորոնախոյոս
ամեն մի ձգտում ճնշվել մե անդամահատ-
վել է հենց իրենց, հախտացյալներն
կողմից: Այդ մասին անչափ հետաքրքրա-
կան տեղեկություններ կան Կաֆայեցու
Տարեգրության մեջ:

Տարեգրության մեջ բազմաթիվ տեղե-
կություններ են բերված զանազան բնական
պատահարների՝ սովի, հեղեղումների,
ձմրան ցրտերի, երկրաշարժի և այլ պա-
տահարների մասին: Այսպես օրինակ, 1631
թվի հունիսի 5-ին Դարասու քաղաքում տե-
ղի է ունենում մեծ հեղեղում, որի մասին
Կաֆայեցին գրում է. «Յուլիս հինգ, ար
Կիրակիւմ. իարասու քաղաքին Աստուած
բարկացած վասն մեղաց մեքոց. անձրիւ
եկաւ, որոտում եղեւ՝ կածկրտուն: Հեղե-

1) Պրոֆ. դոկտ. Մ. Արեղյան, Գուսանական ժողովրդական տաղեր, հայրեններ և անտուններ, Երևան, 1940 թ.:

2) Պաղչատուր Կաֆայեցու Տարեգրությունը, էջ 33:

դա (որը մահացել է 1756 թվին), ¹⁾ Մահամեդ-Գիրեյ (18-րդ դարի հեղինակ)²⁾ և Ֆունդուկլու (17-րդ դ. վերջի և 18-րդ դարի սկզբների պատմիչ)³⁾։ Կան նաև Ղուխի պատմությանը վերաբերող մի շարք վավերագրեր, որոնք ամփոփված են զանազան ժողովածուներում և հրատարակված Օղեսայում⁴⁾։

Պաշտուր Երեց Կաֆայեցու Տարեգրության ուսումնասիրությունից պարզվում է, որ Կաֆայեցու Տարեգրությունը 17-րդ դարի 20—70-ական թվականների Ղուխի պատմական իրադարձությունները չէ բաղդող միակ պատմական աշխատությունն է։ Նա դեպքերը նկարագրել է որպես ախանատես։

Կաֆայեցու աշխատությունն առանձնապես արժեքավոր է Հայ մատենագրության պատմության համար։ Նա միակ մեզ հասած պատմական աշխատությունն է Հայերեն լեզվով, որը պարունակում է Ղուխի պատմությունը։ Հայկական մատենագրության մեջ մինչև այժմ մեզ հայտնի էին Հայ մատենագիրների կողմից հարևան ժողովուրդներին մասին գրած մի շարք պատմական աշխատություններ։ Այդ շարքում կարելի է թվել՝ աղվանից, պարսից, բյուզանդացոց, հնդկաց և այլ պատմություններ։ Սակայն Ղուխի պատմության վերաբերյալ հայադիտության մեջ մինչև այժմ ոչինչ հայտնի չէր։ Այժմ արդեն պարզվում է, որ մեր գրասեր պապերը չեն թերացել այստեղ ևս, և Կաֆայեցու ներկա Տարեգրությունը դալիս է ծածկելու այդ բացը։— Ի՞նչ խաներ են եղել Ղուխում, ինչպիսի հարաբերության մեջ են դրվել նրանք տաճկական կառավարության հետ, ինչպիսի՞ հարաբերություն է գոյություն ունեցել Ղուխի և նր-

առից հարևան ուստական, լեհական և այլ կառավարությունների միջև, ի՞նչ քաղաքականություն են վարել խաներն իրենց հպատակների նկատմամբ և այլն։— Ահա այն կարևոր պատմական փաստերը, որոնց վրա ուշադրություն է դարձրել Պաշտուր Երեց Կաֆայեցին իր Տարեգրությունը շարադրելիս։

Պաշտուր Կաֆայեցու Տարեգրության մեջ Ղուխի պատմությանը վերաբերող իրադարձությունները հիմնականում պարտվում են վեց խաների շուրջը՝ Ջանիբեկ-Գիրեյ II-ի (1610—1623, 1627—1635 թվականներ), Մահամեդ-Գիրեյ III-ի (1623—1627 թ. թ.), Ինայեթ-Գիրեյ I-ի (1635—1637 թ. թ.), Սելեմեթ-Գիրեյ I-ի (1635—1641 թ. թ.), Մուհամեդ-Գիրեյ IV-ի (1641—1644 թ. թ.) և Իսլամ-Գիրեյ III-ի (1644—1654 թ. թ.) շուրջը։

Կաֆայեցին իր Տարեգրության մեջ մեծ տեղ է տվել Ղուխի թերակղզում տեղի ունեցող միջխանական կռիվներին, հատկապես խանական զահե շուրջը ծավալվող պայքարին։ Այսպես, 1624 թվ. մայիսի 14-ին, եղբայրներ Տուլլեթ-գիրեյ սուլթանի և Ջանեբլը խանի, և Ֆոբայրների՝ Շահին-Գիրեյի և Մահմեդ-Գիրեյի միջև սկսված կատաղի պայքարը Կաֆայեցին հետևյալ ձևով է նկարագրում⁵⁾։

«Դարձեալ նոր սքանչելիք եւ զարմացումն ամենեցոյն, որ եկաւ ի Կաֆա ճանպիղքերա-խանն եւ Տուլլեթ-Գերէ սուլթանն մայիսի ԻԴ (24), օրն երկուշաբթի։

(Այս խաները դուրս էին գլած Ղուխից և տեղի խաներն էին Շահին-Գիրեյը և Մահմեդ-Գիրեյը)։ Եւ եղև սասանումն ամենացուն եւ բարկութիւն մեծ քաղաքիս մերում, եւ ոչ գտանէին կերակուր ամենեքեան մարդիք եւ անասունք։ Զի փա-

1) Ուղայի պատմությունը վերնագրված է «Աս-սիրու-ս-սիյա-Ֆի ախմարի Մալուկի Քաթար», այսինքն՝ «Նոթն մուրափների տեղեկությունները Քաթարական թագավորների մասին»։ Ուղայի այս պատմությունը հրատարակել է Երոֆ. Դադի Բեկը 1833 թվին։

2) Մահամեդ-Գիրեյի այս աշխատությունը մնում է դեռ ևս հրատարակված վիճակում։

3) Ֆունդուկլուն ևս գտնվում է հրատարակված վիճակում։

4) Ղուխական խաների փաստաթղթերի ժողովածուների մանրամասն բերվող աղբյուրն տես Դ. Խոմիրով, Источниковедение, т. I. Москва, 1941 г.

կեալ եղեն ամենայն դրունք և ամենայն մրգածախք, մսածախք և հացածախք՝ վասն բազմանալոյ անօրինաց ի վերայ քաղաքիս: Հն (75) օր պառկեցան քառասուն խառըրդայ: Եւ անօրէն ճանպէսերէ խանն և Տօլէթ քերէ սուլթանն և այլ պաղի անօրէնք պատեցին դմեղ. և ամեն օր պատերազմէին ընդ իրար ի վերայ Շահին քէրային և Մէհմէտ քէրային. ոչ կարէին յաղթել...»¹⁾

Միջխանական այս կռիւները ծանր հետևանքներ են ունենում կաֆայցիների համար: «Սուրբ չորացան,— դրում է Կաֆայցիներ— աղբիւրք ցամաքեցան, կտուք պահասեցան. աղաղակէին անասունք և խոտ ոչ դառնէին, հողն լիզէին: Մարդիք ողբային, կանայք կոծէին, տղայք լային. և հայրք մխիթարէին՝ թէ այսօր և վաղն մեզ խաղաղութիւն կու լինի, և փակեալ դրունք կու բացի, և մեզ ուրախութիւնն կու լինի. այսօր և վաղն ասել և դմիմիանս մխիթարելով, մինչև եղև դրաւ մարտի...»²⁾

Միջխանական այս պատերազմը վերջանում է նրանով, որ Շահին-գիրայը և իր եղբայրը պարսութեան են մատնում Զանդի-Գիրային. «Եւ կատարումն օր առաջի օգոստոսի, և կիրակի բարելուս առաւօտուն, փախստական եղև Ճանպէսէրան և սուլթանն. պայրախ առին և հաղիւ ի խառըրդան ընկան: Եւ զօրքն կոտորեցան, մեռնողն մեռան, ողջք փախան, այլք ծովն լցվան և այլք լիրինո և ի Մահալան ընկան և հաղիւ գերծեցան: Հինգ վեց հարիւր յերկան դտակ դերի վարեցաւ, ԶՂ (990) ի սուր սուսերի մաշեցան: Բազում լաշ դիպեցան ի ծովեզերն. երկու վազիր սատակեցաւ, և մէկ մեծ վազիր ետրայի եղաւ, մտան խառըրդան և զնացին»³⁾

Պատերազմից հետո տեղի խառն զորքերն սկսում են թալանել տեղացիներին.

«Եւ Շահին քէրայըն յունէր բազում ասքէր՝ մոք, նողայ... պատեցին բոլոր պարիսպն ի Մահալան. և բազում տներ տապալեցին, և մեղ կողոպտեցին, չախչըներ քանդեցին, և վանորայքն յաւիրեցին, և բազում չարիք տիրեցին ի վերայ մեր...»⁴⁾

Ղաթի խաները, օգտուելով ստեղծված բարենպաստ քաղաքական պայմաններից, ուժեղացնում են իրենց ճնշումը հպատակների վրա—կաշառքներ են վերցնում նրանցից և ֆարկի նոր տեսակներ կարգում: Այդ հարկերի մի տեսակի, «հասը» կոչվող հարկի մասին, Կաֆայցիներ՝ Ինայիթ—գիրայի վարած քաղաքականութեան կապակցութեամբ դրում է. «Եւ ետ այնորիկ Կաֆացու խարաճն եկաւ, հասը հարճ կասն, անունն անխճած ու ղինքն անխճած, մարդոյ զուլս երեք երեք ոսկի: Քրիստոնիայք լացին, ողբացին՝ թէ ճար չունենք տալոյ, էմրն երկու ոսկի է, երկու առ, թէ չէ նաւն կու մտնումք կերթամք թագաւորին, մեզի արժ տուր: Մէկ դատաւոր մի կայր Սեւ Հողապարիսպէն, որ անունն ասն Մուսա օղլի կամ թէ՛ Սուլթանի օղլի. անանխճածն էր դատաւոր, էմր չարաւ երկու, այլ՝ երեք, վասն այն պատճառին համար, որ ըտելաթ կերել էր քրիստոնեայք չլվար մնացին...»⁵⁾

Սաչատուր Կաֆայցու Տարեգրութեանը հետաքրքիր տեղեկութիւններ է պարունակում ռուս-ղաթական հարաբերութիւնների, հատկապես Ղաթի խաների և ռուսաց զորամասերի միջև տեղի ունեցող ընդհարումների մասին: Հետաքրքիր են հատկապես Կաֆայցու Կեսեյայի դեպքերի նկարագրութիւնները.—

1616 թվականի Կաֆայում տեղի ունեցող ընդհարման մասին, երբ ռուսներին հաջողվում է վերցնել Կաֆան, իսկ հետո՝ հետ նահանջել:

1) Պաշտուր երեք Կաֆայցու Տարեգրութեանը, էջ 9:

2) Նույնը, էջ 9—10:

3) Նույնը, էջ 9:

4) Նույնը, էջ 10:

5) Նույնը, էջ 25:

1617 թվականի Մեմի փաշայի գլխավորությամբ ուսաց վրա նախաձեռնած արշավանքի մասին, երբ Մեմի փաշան սպանվում է և դնացած տասը նավից երեքը բռնվում:

1622 թվականի ուսաց զորքերի 33 նավով Կաֆայի նավահանգիստը մտնելու մասին, երբ նրանց չի հաղորդում Կաֆան վերցնել, բայց վերադարձին վերցնում են խաղրի լիմանը և տեղի 5 նավերը խլում:

1623 թվականի ուսաց զորքերի 30-000 հողով Օրին Բերան քաղաքը վերցնելու և շատ գերիներ տանելու մասին:

1624 թվականի Քաշուտի ուսանքի կազմակերպած արշավանքի մասին:

1625 թվականի Ղուխի խաների միջև տեղի ունեցող կռիվներում 12-000 ուսու ղինվորների մասնակցության մասին:

1628 թվականի Քաշուտի ուսանքի Կաֆայի վրա հարձակվելու մասին:

1629 թվականի ուսաց զորքի ղեկավար Ղուխ կազմակերպած արշավանքի և Ղաթաուն, Մանգուպը և Մուղտան վերցնելու մասին:

1649 թվականի Ղուխի խաների և օսմանյան միացյալ լանսկներով Ադովի վրա կազմակերպած անհաջող արշավանքների մասին, որի ժամանակ հայերը և կադակները հերոսական դիմադրություն են ցույց տալիս: Այս մասին քիչ հետո:

Եվ, վերջապես, 1650 թվականին Ղուխի խանի ղեկավար Մուսկիա կազմակերպած արշավանքի մասին:

Բերենք նշված ղեկավարից մեկի, Մեմի փաշայի 1617 թվին կազմակերպած արշավանքի մասին Կաֆայեցու տված փոքրիկ տեղեկությունը. «Թվին Ռիզ էր, տասը խառըղայ ուսուսին վրայ գնաց: Մէմէ փաշան Կաֆայիտ էր, բարիտես և բարի մարդ էր, և աշխարհի բարեկամ էր: Ուսուս ըսպան դնա և երեք խառըղան խառ, և շատ մարդիք գերի տարաւ, և օմանք ի ուսը մաշեցան, և այլ ոմանք փախտական եղին: Ամսեանն օգոստոսի

մեծ տրտմութիւն եղաւ Կաֆա քաղաքին և սասանումն ամենեցուն»¹⁾

Նման պատմական տեղեկությունները, ինչ խոսք, մեծ արժեք են ներկայացնում ինչպես Ղուխի, այնպես և ուսաց պատմության համար:

Պաշատուր Կաֆայեցու Տարեգրությունը մեծ արժեք է ներկայացնում նաև Ղուխի հայ գաղութի պատմության, և, ընդհանրապես, հայ-ուսու հարաբերությունների պատմության համար: Նա փաստական արժեքավոր տեղեկություններ է պարունակում Ղուխի հայ գաղութի Ղուխի պատմության մեջ ունեցած դերի մասին: Պարզվում է, որ Ղուխի և նրա շրջապատի հայությունը 17-րդ դարում քաղաքական աչքի ընկնող էջիւն է ունեցել: Հայերն իրենց կազմած զորամասերով միջամտել են միջխանական կռիվներին: Այսպես օրինակ, Շահն-գիրեյի և իսմաիլյան 1628 թվի կռիվի ժամանակ Բեսարաբայից և Լեհաստանից հայկական զորքեր են եկել և միջամտել այդ կռիվին: Այդ մասին Կաֆայեցու մոտ կարդում ենք.

«Թվին Ռիզ (1628) թվականին դարձեալ Շահին քերայ սուլթանն հեծել վերուց ու ելաւ դնաց ի վերայ Պանդամուրին: Թունան անցաւ Շահին քերայն բազում ասքերով: Եւ ետ այնորիկ մեծ բարկութիւն եղեւ Պանդամուրին. չթախին հետ մեկ եղաւ ու սուլթանն կոտորեցաւ ու ասքերն ամէն չարդուեցաւ, պարոնայք մեռան, մոզանք մեռան, սուլթանն ճորով խալսեցաւ. Թունայէն անցաւ, Թախթըն եկաւ: Եւ ետ այնորիկ Պանդամուրն ետեւանցն եկաւ ի Պաղասարայն, չորս քովըն պարտեց ու մէջ խառ. ամիս մի լման հանց զապուն արաւ, որ փախելու կամ կուշու ճար չունէին, որ մէկ տաս օր մալ չերթար, աւեր կանէին. իւրեանց կերակուր չի քար, ձիանուն խոտ չի քար. անիծած նոզայն չորս քովն աւերեց՝ որ Թալեց, տըներ ու տեղաւնք քակեց, ոչխար ու տաւարըն քիչեց... Հարութիւն շատ արաւ, զորն տսենք կամ զորն պատմեմք:

1) Պաշատուր երեք Կաֆայեցու Տարեգրությունը, էջ 2:

Եւ այսորիկ Աստուած լուս արաւ. ԲԺԽ (12-000) հայ եկաւ Գոռեկէ, խանն ու աս-
քէրն խապար չունէին. մին սուլթանն դի-
տակ էր: Ձեռաց տակէ մարդ խըրկել էր:
Երբ որ եկան, զարկին թուրն Նողային,
խանն սուլթանն քիչ մն հաստատեցան ու
կռիւ կանկնեցան— բազում ասքէր մե-
ռան: ¹⁾

Տարեգրութեան մեջ առանձնապէս հե-
տաքերի է 1640 թվականին Ազով քաղաքի
վրա հարձակման: աստիակաւն և Ղուբի
խանութեան զորքերին՝ տեղացի ուսա և
հայ բնակիչներն ցույց տված հերոսական
դիմադրութիւնը:— Տաճկախան և Ղուբի
խաների զորքերը հարձակվում են Ազովի
վրա, իսկ հայ և ուսա բնակիչները ձեռք-
ձեռք տված ո՛չ միայն պաշտպանում են
իրենց քաղաքը, այլ և ջարդում թշնամու
խոշոր ուժերը: Կաֆայեցիին այդ մասին
գրում է.

«Թվականին Ռ2թ (1640) բազում աս-
քէր եկաւ նաւով, ծովով, խառըրդայով,
խայտով իրաստամանու սանձախէն. 2 (900)
թիմարի սպահիք: Յիսուս—վաթսուն չա-
տըր զարկին, եկան Թօփրախալան, փալա-
յին առջեւ նստան: Եւ ետոյ ձի առին,
արապայ առին, եյան գնացին Աղախ՝ ամ-
սեանն յունիսի՝ խանն, փաշայն, թող
այլապաղի պէկլէր պէկլիներ, ծանտըր փա-
շաներ, ծանտըր պարոնայք, ուսումիլի
ասքէր, Պօլսէն ասքէր, Թաթար, նողայ,
չղաթայ, չէրքէս, ոչ կարեմ գրով պատմել
կամ լեզվով. երկու թաղաւորի ասքէր Հի
(72) միլլաթէն կային: Գնացին Աղախ,
կոտորեցան. եւ շատ դատեցան, դատարկ
եյան: Աղախ չի կարցան առնել ու ամօ-
թալից դարձան. 10 Ռ (10-000) զլխաւոր
մեռան. եւ այլապաղիքն ով կարէ պատ-
մել... Հայն բերթէն ի դուս լաղըմ ա-
րաւ, որտեղ որ օսմանլըին ասքէրն կար,
ցիր ու ցաւ, արաւ, սօխախ սոխախ իրաց-
ամէն լաղըմ թալիւրուն Ռ (1000) հոգի
երկինքն ի վեր կու ելանէր եւ դարձեալ ի
վայր կու իջանէր լէշն...»: ²⁾

Կաֆայեցու Տարեգրութիւնն արժե-
քավոր է և հայ բարբառների պատմու-
թեան ուսումնասիրութեան (համար: Օրի-
նակ, ինչ բարբառով է խոսել և գրել Կա-
ֆայեցի մեր հայ հատվածը — դա հայա-
դիտութեան համար երկրորդական հարց
է: Այդ հարցը կարեւոր է մանավանդ այն
տեսակետից, որ Կաֆայի հայ բնակչու-
թեան մեծ մասը, ինչպէս հայտնի է, գաղ-
թել է Անիից և բնական է, որ անեցիկե-
րի նախկին բարբառից մինչև 17-րդ դարը
շատ բան պահպանվում էր:

Առանձնապէս հետաքրքիր են Ուսաւորի
հետեյալ արտահայտութիւնները:—

«Ջախներ քակվել է» (ջրաղացները
քանդվել են),

«մէկ անիծածն իզարկ սուլթանին»
(մի անիծածը խփեց սուլթանին),

«խանն թալլեց, տուքանք խառ» (խանը
թալանեց, տուղանք վերցրեց),

«բազում քանչիլիք եղեւ» (շատ սքան-
չելիքներ եղան),

«չի քար», «չիթող» (չկար, չթողեց),

«բերդին դովին փակեցին» (բերդի
դռները փակեցին),

«մէկ քանի հոգւոյ մալ» (մի քանի
հոգու էլ),

«քիչ մն դիժար եղեւ» (մի քիչ դժար
եղավ),

«հոս չէր», (այտուղ չէր),

«կուլինա» (կլինի),

«կու խմեն» (կխմեն),

«հանց տարաւ» (այնպէս տարավ որ),

«խրկեց» (ուղարկեց),

«տեղ մն տուր» (մի տեղ տուր),

«քովն» (մոտը),

«յաւիրեցին» (ամիրեցին), և այլն:



Կաֆայեցու տարեգրութեան վերջին է-
ջերից մեկի վրա (Թերթ 23 ա) տեղավոր-
ված է յոթը տողից բաղկացած մի ծած-
կադրութիւն, որը մինչև այժմ չի վեր-

¹⁾ Ուսաւոր երեց Կաֆայեցու տարեգրութիւնը, էջ 12—13:

²⁾ Նույնը, էջ 12—13, 26—27:

ծանկած: Այդ ծածկադրութիւնը Կաֆայեցու Տարեգրութեան տեքստի օրդանական մասն է կազմում և գրված է իր, Կաֆայեցու ձեռքով: Տարեգրութեան ուսումնասիրութեան կապակցութեամբ անհրաժեշտ եղավ զբաղվել նաև այս ծածկադրութեամբ և վերածնել այն: Ծածկադրութեանը նախորդում է Կաֆայեցու գրած երկու տողից

բաղկացած մի նախադասութիւն, որը կապվում է ծածկադրութեան հետ: Ծածկադրութիւնից հետո Կաֆայեցին սովորական ձևով շարունակում է իր Տարեգրութիւնը: Ստորև բերում ենք ամբողջ ծածկադրութիւնը:— Այս է փակագիր. իմաստունն իմանայ. եւ ամբիմաստն գարմանայ. ով խղայր եւ՝ զիս յիշեայ գրադմանեզս.

գի.	ի.	Ա.	էձ.	Ա.	ՍՍ.	88.			
ՎԾ.	ՎԾ.	ՍՍ.ՍՍ	է.	ՍՍՍՍ.	է.	ՎՎ.			
ՍՍ.	է.	ԵՌ.	ԹՌ.	ԺԺ.	ԺԵԺԵ.	ԺԺ.	ՆՆ.	88.	ՌՌ.
ԿԹՂԿՍ.	ՂԼ.	ԺԺ.	ԵՌ.	Ա.	ՂԼ.	88.	ՌՌ.		
ՌՇ.	ՌՇ.	Ա.	ԵՌ.	ԲԲ.	Ա.	ՍՍ.	ՍՍ.	ԺԺ.	ՂԼ.
ԽԵ.	ԽԵ.	88.	ՌՌ.	ՌՌ.	ԺԺ.	ՃՃ.	է.	88.	ՍՍ:

Թվին. ԶԹ: Էր բազում ասքէ<ր> եկավ Կաֆան:

Հայ ծածկադրութիւնների վերծանութեամբ և նրանց սխառմատիղացիայով, ինչպես հայտնի է, զբաղվել է անվանի գիտնական ակադ. Հ. Աճառյանն իր «Հայոց գրերը» աշխատութեան մեջ, որը մաս մաս տպվել է «Հանդէս ամսօրեայ»-ում, իսկ 1928 թվին հրատարակվել առանձին գրքով:¹ Կաֆայեցու ծածկադրութեան բանալին, ինչպես պարզվեց, գումարադիր ծածկադրութիւնն է:

Կաֆայեցու ծածկադրութեան կառուցվածքի հետ ծանոթանալուց հետո մենք նկատեցինք, որ այն վերծանելու երկու հնարավորութիւն գոյութիւն ունի— մեկը սկզբից, ուր վերջանում է հեղինակի նախարան երկտողը՝ «զիս յիշեայ գրադմանեզս», իսկ մյուսը՝ միջից, ուր գործ է ածված «Կթղկս» հապավմած բառը: Ենթադրում էինք, որ առաջին դեպքում ծածկադրութիւնը պիտի սկսվի գրչի անվան հիշատակութեամբ, իսկ երկրորդ դեպքում, կարծում էինք, որ «Կթղկս»-ից հետո պիտի լինի ժամանակակից կաթողիկոսի անունը, ինչպես սովորաբար հիշատակարաններում պատահում է զի կաթողիկոսութեանն», «ի հայրապետութեանն»,

«յիշխանութեանն» և ապա՝ տվյալ անձնավորութեան անունը:

Նախ փորձեցինք վերծանել սկզբից, սակայն մեր ջանքերն ապարդյուն անցան, որովհետև մենք սխալմամբ հեղինակի անունը փորձում էինք գտնել ոչ թե «Պաշտօն» երէց» ձևով, այլ «Պաշտօն», ինչպես հիշել է ինքն իրեն Տարեգրութեան առաջին մասում:

Մոտեցման երկրորդ փորձը ևս մեղ ոչ մի արդյունքի չհասցրեց, չնայած մենք ճիշտ էինք ընտրել ժամանակակից կաթողիկոսի, Փիլիպոս Աղբակեցու անունը (նա հայրապետական աթոռի վրա է գտնվել 1633—1655 թվականներին):²— Փիլիպոս անվան երկրորդ և չորրորդ գրերը կրկնվում են, ուրեմն, ենթադրում էինք մենք, «Կթղկս» բառից հետո ծածկադրութեան երկրորդ և չորրորդ նշանադրերը պիտի կրկնվեն, բայց, դժբախտաբար, չէին կրկնվում:

Փորձեցինք ծածկադրութեան վերծանութեանը մոտենալ այլ ձևով— կաթողիկոսի անունը փնտրել ոչ թե «Կթղկս» հապավմած բառից հետո, այլ նրանից առաջ: «Փիլիպոս» անունը բաղկացած է յոթը տառից,

1) Հ. Աճառյան, Հայոց գրերը, Վիեննա, 1928 թ.:

2) Մ. Օրմանյան, Ազգագրաբանութ., 2-րդ հատոր, էջ 2:

խակ մենք կարծում էինք, որ պիտի լինի «Փիլիպոս կաթողիկոս» ձևով, ուստի և «ԿԹՂԿՍ» բառից յոթը նշանադիր հետ դրանալով հանդիպեցինք «ԹԻ» ծածկադիր նշանին: Այդպես վարվելով մենք նկատեցինք, որ երկրորդ և չորրորդ ծածկադիրը «ԺԺ» է և կրկնվում է: Մեզ պարզ դարձավ, որ ծածկադիրը դրված է դոմարադիր ծածկադրով, որովհետև «ԺԺ»-ի թվական էկվիվալենտն է «Ի» ($10+10=20$),

«ԹԻ»-ինը «Փ», և այլն: Այնուհետև դրվար չէր վերծանել ծածկադրի մյուս մասերը: Որոշ դժվարությունների միայն մենք հանդիպեցինք չորս տառ ունեցող ծածկադիր նշանադրերի վերծանության ժամանակ, բայց դոմարադիր ծածկադրության ընդհանուր սկզբունքի հիման վրա այդ ևս դժվար չէր հասկանալ:

Ծածկադրությունը վերծանվում է

ՁԽ	ա	չ	ա	ա	ն					
ՁԻԻ.	Ա.	ԷՃ	Ա.	ՄՄ.	ՅՅ					
ւ			բ	է		բ		է	ց	
ՎԾ	ՎԾ	ՄԾ	ՄԾ.	Է	ՄԾ	ՄԾ	է	ՎՎ.		
ա	է	բ	Փ	Ի	Լ		Ի	պ	"	"
ՍՍ.	է.	ԵՌ.	ԹՌ.	ԺԺ.	ԺԵ. ԺԵ.		ԺԺ	ՆՆ.	ՅՅ	ՌՌ
	Կ	Ի	բ	ա	Կ	"	"			
ԿԹՂԿՍ.	ԼԼ.	ԺԺ.	ԵՌ	Ա.	ԼԼ	ՅՅ.	ՌՌ			
Վ	ա	բ	դ	ա	ն	ն	է	Կ	"	
ՌՇ	ՌՇ	Ա.	ԵՌ.	ԲԲ.	Ա.	ՄՄ.	ՄՄ	ԺԺ.	ԼԼ	ՅՅ
դ	"	"	"	Ս	Ի	մ	է	"	ն	
ԽԵ	ԽԵ	ՅՅ.	ՌՌ	ՌՌ.	ԺԺ	ՃՃ.	Է	ՅՅ.	ՄՄ.	

Այսպիսով, ծածկադրությունը կարդացվում է. «գլխաչառուր Էրեց. տէր Փիլիպոս կաթողիկոս. կիրառու. վարդապ. Նիկողոս. Սիմէոն»: խաչատուր երեցն ինքը հեղինակն է, Փիլիպոս կաթողիկոսը—ժամանակակից կաթողիկոսն է, իսկ մյուսներն իր ժամանակի աչքի ընկնող անձինք են: Ծածկադրության տեքստը մեր մատենադրության համար առանձին արժեք չի ներկայացնում:

Վերծանությունից հետո պարզվեց, որ Կաֆայեցու ծածկադրության մեջ նպատակադրված կամ պատահական ձևով տեղ են դրել հետևյալ բարդացումները:—

1. Ծածկադիր նշանադրերի վրա հապավման նշանը դրված է կամայական ձևով—որոշ նշանադրերի վրա դրված է, իսկ որոշ նշանադրերի վրա՝ ոչ:

2. Բառերից առաջ «դ» նախդիրը դրած է ամբողջ իր սովորական նշանակությամբ:

3. Ճիշտ նման ձևով իրենց սովորա-

կան հնչունական նշանակությամբ դործ են ամբողջ «ա» և «է» տառերը:

4. Ծածկադրության որոշ թվանշաններ բերված են ո'չ թե միանիշ թվական դոմարով, այլ վուլգար ձևով—երկնիշ տառերի դոմարով: Այսպես, դրված է ոչ թե «Հ», այլ «էԺ», ոչ թե «Ր», այլ «ԵՌ», ոչ թե «Փ», այլ «ԹԻ», և այլն:

5. Որոշ տառերի նշանադրերը երկուսի փոխարեն չորս են: Քառանիշ այդպիսի ծածկադրերն են «ԽԵ ԽԵ», «ՌՇ ՌՇ», «ՄՄ ՄՄ», և «ՎԾ ՎԾ»:

Մյուս բոլոր ծածկադիր նշանադրերի կրկնանշաններ են՝ ԲԲ, ԺԺ, ԻԻ, ՃՃ, ՄՄ, ՅՅ, ՆՆ, ՌՌ, ՍՍ, ՎՎ:

Հապավված են «ԹՎԼՆ» և «ԿԹՂԿ» բառերը: Առաջինը, ինչպես ասել ենք արդեն, «Թվական» բառն է, իսկ երկրորդը՝ «կաթողիկոս»:

«ՁԹ»-ն թվական է, ճիշտ ձևով պիտի լինի ՌՁԹ ձևով:

Ծածկադրության մեջ կատարված է մի սխալ—«Ր»-ն, ծածկադրված է «ՄՄ

ՄԾ» (այսինքն 2050+2050), փոխանակ ՄՇ
ՄՇ (այսինքն 2500+2500):

Վերջին նշանադրի ճիշտ է կվիվալենտն
է «Բ»:

Այսպիսով, ծածկադրության համար,
ըստ առանձին խմբերի դասավորման, ու-
նենում ենք հետևյալ բանալին.—

Անփոփոխ	Կրկնակի քվական
ա—Ա	դ—ԲԲ
դ—Չ	ի—ԺԺ
է—Է	խ—ԻԻ
	մ—ՃՃ
	ն—ՄՄ
Թվական եկվիվալենտով	ո—ՅՅ
չ—ԷՃ	պ—ՆՆ
բ—ԵՌ	ս—ՌՌ
փ—ԹՌ	տ—ՍՍ
	ց—ՎՎ
Թվական քառանիշ	Հաղպալուսներ
դ—ԽԵ ԽԵ	թվին—թվական
վ—ՌՇ ՌՇ	կթղկ—կաթողիկոս
բ—ՍԾ ՍԾ	ՁԹ—<Ռ>ՁԹ
ւ—ՎԾ ՎԾ	

Պաշատուր Կաֆայեցին, ինչպես տես-
նում ենք, իր ծածկադրութունը կազմել է
որոշ բարդացումներով, հարկադրելով հե-
տաքերվող անձանց մտածել, չարչարվել
նրա վրա: Իդուր չէ, որ նա իր ծածկա-
դրության վերծանութունը համարել է
գլխակ մարդու գործ. «Այս է փակադիր,
խմաստունն իմանայ եւ անխմաստն զար-
մանայ»:

Ներկա փոքրիկ հոդվածում մի առ մի
թվել Կաֆայեցու Տարեդրության բոլոր
արժանիքները—անհնար է: Այնտեղ նյութեր
կարող են դառնել ոչ միայն պատմաբան-
ները, այլ և մեր դրականագետները, մա-
թեմատիկոսները, լեզվաբանները և այլ
մասնագիտությամբ զբաղվող գիտնական-
ները: Սակայն Կաֆայեցու Տարեդրության
մեջ մեզ համար ամենից արժեքավորը,

ամենից դնահատելին— այդ հայ և ուս-
ժողովուրդների հարաբերություններին վե-
րաբերող պատմական տեղեկություններն
են:— Նա հայերենով մեզ հասած միակ
պատմական աշխատությունն է, որը նպա-
տակ է դրել շարադրել Ղուիմ հայ հատ-
վածի պատմությունը, կապված Ռուս մեծ
ժողովրդի և Ղուիմ պատմության հետ:

Պաշատուր երեց Կաֆայեցու Տարե-
դրությունը մի նոր և անդնահատելի դանձ
է, որ դալիս է հարուստացնելու մեր հայ
մատենաշարը:

Կաֆայեցու Տարեդրությունը մի ա-
վելորդ անգամ դալիս է ապացուցելու
մեր ջանասեր պապերի հողատար վերա-
բերմունքը դեպի դալիք սերունդները—
նրանց համար բարոյական մեծ պարտք
է համարվել դրել և թողնել դալիք սե-
րունդին իրենց ժամանակաշրջանի հետա-
քրքրական և ոսկյա տարեդրությունները:

Պրոֆ.-դոկտ. ԱՄ. ԱՌ. ԱՀԱՄԵՍԱՆ

(Ս. Էջմիածնի գերագույն հոգևոր խորհրդի գիտն. ֆաբուլար)